հեթանոս, ՉՀուան երդմնեսցի 'ի վերայ հին կտակարանի և մահմետականն 'ի վերայ ղուռանի, և հեթանոսն 'ի վերայ կռքի իւրոյ։

ԳԼՈՒԽ ՇԹ.

Որպէս քրէական մեղաւորն դատելոյ իւրաքանչ 'ի մի տարւոյ չորս ժամանակաւ. այսպէս եթէ քրէական մեղաւորն ըմբռնեսցի յառաջ քան զ15 աւուր դատելոյ նմայ, պարտ է մնալ 'ի բանտի երիս ամիս մինչև միւս ժամանակն, զի դանդատողն ունիցի ժամանակ յաւելի քանթէ հնգետասան աւուր պատրաստելոյ դանդատ և վկայքս իւր։

ԳԼՈՒԽ ՇԺ.

'Ի պատճառն երկայն ժամանակաւ աշխարհն հայոց ամայի մնացեալ 'ի որ ոք ծայրագոյն իշխանացէ սեպհական, ազգէ և աւանդութենէ հայոց, և պաշտօն թէ նախարարութեան, թէ իշխանութեան, յատկապէս զօրապետութեան հարկաւոր է լինիլ այր ուշիմ և գիտուն 'ի արհեստ կառավարութեան, վասն որոյ եթէ գուցէ զի 'ի միջի աշխարհէն ընտրեցեալ փոխանորդաց մի գտցի բաւական արժանաւոր անձինք ազգէն հայոց և աւանդութեամբն հայաստանեաց Սուրբ Եկեղեցւոյ որ արժանաւորութիւն ունենան 'ի պաշտօնի զօրապետութեան, յայնժամ հարկիւ